Դարույր Սևակ

Բարի լույս

Նորից երկնքով հին արշալույսն է սիգալով սիգում,
Որպեսզի մեր նոր ու քաղաքակիրթ հիշողության մեջ
Միշտ էլ թարմ մնան... առասպելները:
-Բարի լո՛ւյս, իմ նո՛ր և իմ... առասպե՛լ:
Ինչպե՞ս քնեցիր:
Ի՞նչ երազ տեսար:
Ի՞նչ գեշ երազից արթնացար վախով:
Եվ երազիդ մեջ
Դու պատահաբար չտեսա՞ր նրան,
Ով - ի՛նքդ էլ գիտես - քեզ գիտի այնպես,
Ինչպես հիվանդն իր հիվանդությունը...
Լույսը բարի է
Եվ բարին լույս է... այնքան ժամանակ,
Քանի դեռ սրտերն այդ «բարի լույս»-ը,
Դարերո՛վ մաշված այդ «բարի լույս»-ը
Լսում են կարծես առաջի՛ն անգամ
Եվ ամեն անգամ փշաքաղվում են տաք փաղաքշանքից
Ու նվաղումից սարսըռում այնպես,
Ինչպես երևի
Մութ երկրաշարժից բույսն է սարսըռում ու փշաքաղվում...
Ես փոքր-ինչ հետո դուրս կգամ փողոց,

Որ հետախուզեմ վիճակը օդի՝
Թունդ ներծծելով ծխամոլի պես:
Եվ վա՜յ թե թվա, թե ամեն ինչից
Բուրմունք է գալիս թարմուկ աղջըկա
Ու կամ ծաղկածայր փշոտ վարունգի:
Եվ վա՜յ թե թվա, թե բոլոր մարդիկ
Ի՛նձ են կողոպտում՝ օդը շնչելով,
Քանի որ օդը... քեզնո՜վ է լեցուն,
Ու քեզ են նրանք ներշնչում կարծե՜ս...
Հանգել են արդեն լույսերը բոլոր,
Եվ լոկ այս կիկլոպ լուսանիշներն են, որ արևի դեմ
Ծիսաքրմական գոռոզությունը կորցրած թեպետ՝
Պատվիրանի պես կրկնում են դարձյալ
Իրենց գունային երրորդությունը՝
Բոլոր սանձազերծ մեքենաներին տեղում մեխելով
Կամ վայրկենապես քշելով առաջ:
Մի՞թե կանաչը պիտի կուրանա
Աշխարհի բոլոր լուսանիշներում,
Որ ես էլ կրկին, կանչելու նման, կարոտով ասեմ.
-Բարի լո՜ւյս, իմ լույս կանա՛չ ու... կարմի՜ր:
Ամպի մի պատառ արևն է ծածկում.
Ակնոց է դնում արևը կարծես:
Ես անակնո՜ց էլ պարզ տեսնում եմ քեզ
Եվ զգում եմ քեզ ինձ այնքա՜ն մոտիկ,
Որ կարծես նույնիսկ քո շունչն եմ շնչում,
Մինչդեռ դու ինձնից հեռո՜ւ ես այնքան,
Որքան կիկլոպը՝ այս լուսանիշից:
Բայց մեզ կապում է մի ո՜ղջ պատմություն,
Փառահե՛ղ, անմե՛ղ, անմե՛ռ պատմություն,
Եվ մի «բարի լույս», որ չունի՜ վախճան:

Նա պիտի հնչի մեզնի՛ց էլ հետո
Եվ այնպե՞ս հնչի,
Որ մերպեսները
Նո՛ւյն փաղաքշանքից միշտ փշաքաղվեն,
Նո՛ւյն նվաղումով սարսըռան տաքուկ,
Ինչպես բույսերը՝ մութ երկրաշարժից:
-Բարի լո՛ւյս, իմ կյա՛նք և իմ... պատմությո՛ւն...

7,13.II.1964թ.
Երևան